ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/23

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ Ռուբեն Հակոբյանի ներկայացուցիչ՝

Տ. Հակոբյանի (լիազորագիր տրված՝ 10.02.2019թ.)

քննելով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարիքների համար ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում Ռուբեն Վլադիմիրի Հակոբյանի կողմից 19.02.2019թ. ներկայացված և 19.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/23 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>Ռուբեն Վլադիմիրի Հակոբյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ռուբեն Վլադիմիրի Հակոբյանը (այսուհետ՝ բողոքաբեր) 19.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից 23.01.2019թ. ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանը: Վերջինս 04.02.2019թ. գնահատող հանձնաժողովի N 2 արձանագրության համաձայն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, աճուրդի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է տեղեկանք, համաձայն որի անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա 31.01.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ՝ 33 000 ՀՀ դրամ: Այնուհետև «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի 13.02.2019թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Բողոքաբերը տեղեկացել է, որ անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանի առկա պարտավորությունը՝ 33 000 ՀՀ դրամն առաջացել է «ՀՀ Պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարներից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 19.07.2017թ. թիվ 228-Ն հրամանի սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարները առհասարակ նշված չեն:

Բողոքաբերը հայտնել է, որ երբևիցե տեղեկացված կամ ծանուցված չի եղել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների առկա պարտավորության մասին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Կից ներկայացվում է քաղվածքը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Սակայն Բողոքաբերը գտնում է, որ վերը նշված դրոշմանիշային վճարները չեն համարվում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ և չեն կարող խոչընդոտ հանդիսանալ Ա/Ձ-ի հետագա գործընթացի համար: Վերը նշված պարտքը դրոշմանիշային վճարների գծով Ռուբեն Հակոբյանի կողմից վճարվել է տեղեկանալու հաջորդ օրը: Կից ներկայացվում են նաև վճարման անդորրագիրը: Եվս մեկ փաստ, որ տեղեկացված լինելու դեպքում այդ վճարների գծով առկա պարտքը ևս մարված կլիներ ժամանակին:

Բողոքաբերը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, 9-րդ մասը, 51-րդ հոդվածի 1-ին մասը:

Այսպիսով Բողոքաբերը գտնում է, որ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն

գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից:

Բողոքաբերը գտնում է, որ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ իրոք չի ունեցել ժամկետանց պարտավորություններ և հիմք ընդունելով հարկային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգում առկա տվյալները՝ պարտավորությունների բացակայության պարագայում, հայտ է ներկայացրել և մասնակցել վերը նշված էլեկտրոնային աճուրդին:

Ռուբեն Վլադիմիրի Հակոբյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.02.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված որոշումը:

2. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 20.02.2019թ. թիվ 03/07/706-19 գրությամբ հայտնել է, որ ավտոլվացման ծառայություններ ձեռք բերելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը և Ա/Ձ Գրիգոր Այվազյանը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2019 թվականի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 05.02.2019 թվականին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում է ներկայացրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝

հայտը ներկայացնելու օրվա (31.01.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Նշված հարցմանն ի պատասխան՝ Կոմիտեի կողմից Կարգի 20-րդ կետով սահմանված ժամկետում՝ 08.02.2019 թվականին, տրամադրվել է տեղեկատվություն, համաձայն որի՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը, այն է՝ գնային առաջարկի (795 000 ՀՀ դրամ) մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (33 000 ՀՀ դրամ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 13.02.2019 թվականի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում, Կարգի 20-րդ կետի պահանջներին համապատասխան, մերժել է ԱՁ Ռուբեն Հակոբյանի հայտը՝ անկախ վերջինիս կողմից Կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.02.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարիքների համար հայտարարվել է «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 31.01.2019թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 08.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 33 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով Ռուբեն Վլադիմիրի Հակոբյանի կողմից 19.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 20.02.2019թ. թիվ 03/07/706-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված

ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում են նաև, որ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջները: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Նույն կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք

աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն. զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարիքների համար հայտարարվել է «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 31.01.2019թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը:

Մասնակցի վերջնական գնային առաջարկը կազմել է 795 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ

կետի հիման վրա 08.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 33 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի հայտը մերժվել է:

Բողոքաբերի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է 31.01.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը 31.01.2019թ. դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

Բողոքաբերը ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.02.2019թ. տրված թիվ 277 տեղեկանքը, համաձայն որի 31.01.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն չունի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 33 000 ՀՀ դրամի չափով, որը

գերազանցում է Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսի չեմը: Միևնույն ժամանակ, արձանագրում եմ, որ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի որպես հարկ վճարողի՝ անձնական հաշվի քարտից քաղվածքի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.02.2019թ. տրված թիվ 277 տեղեկանքի համաձայն՝ ***Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը 31.01.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն չունի:***

Այսպիսով՝ հիմք ընդունելով Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի որպես հարկ վճարողի՝ անձնական հաշվի քարտից քաղվածքը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.02.2019թ. տրված թիվ 277 տեղեկանքը, գտնում եմ, որ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի հայտը բավարարում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, ուստի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ռուբեն Վլադիմիրի Հակոբյանի կողմից 19.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացրած Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի հայտը մերժելու մասին որոշումը և սույն որոշումից հետո կայացված այլ որոշում:

2. Պարտավորեցնել «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի հայտը սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում գնահատել ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ